

ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԺԱՌԱՆԳԱԻՐՈՒՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱԽԱՔՈՅԹՆԵՐ

Ա. Կաղանդ

Նոր Տարիի զալուստը մեծ շուքով տօնուեցաւ Դպրեմանքէն ներս Հինգշաբթի, 13 Յունուարի իրիկունը: Սրահը նախորդ երկու օրերու ընթացքին չքեղօրէն զարդարուած էր ուսանողութեան կողմէ, մինչ տօնածառը մասնաւոր փայլ մը կու տար:

Երեկոյեան ժամը 6ին, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Միսրան Հայրերու ընկերակցութեամբ մուտք գործեց սրահ: Ներկայ էին նաեւ Դպրեմանքի ուսուցչական կազմը, Վանքի պաշտօնեաներ եւ հիւրեր:

Կաղանդի հանդէսը բացաւ Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան, որմէ ետք ամբողջ ժամ մը ուսանողներ երգեցին, արտասանեցին եւ ընթերցումներ կատարեցին՝ Նոր Տարին փառաբանելով: Ապա ժամանեց Կաղանդ Պապուկը, որ իր յորդորականներով, բանաւոր կաղանդէքներով եւ զուարճութիւններով խանդավառ եւ ուրախ մթնոլորտ մը ստեղծեց:

Կաղանդէքներու բաշխումէն ետք, Նոր Տարիի իմաստին եւ ժամանակի հասկացողութեան մասին սքանչելի խորհրդածութիւններ ըրաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ ապա շնորհաւորեց ներկաները, բոլորին ցանկալով յաջող օրեր:

Կաղանդի այս գեղեցիկ հանդիսութիւնը փակուեցաւ համախումբ երգուած «Հայր մեր»ով:

Բ. Հայկական կրօնական երաժշտութեան ունկնդրութիւն

Շաբաթ, Յունուար 15, երեկոյեան ժամը 7-30ին կատարուեցաւ Հայկական կրօնական երաժշտութեան ունկնդրութիւն մը, ղեկավարութեամբ եւ կեղեցական երաժշտութեան ուսուցիչ Պրն. Սահակ Գալայճեանի:

Զայնապնակներու վրայ ունկնդրուեցան հայկական շարականներ եւ մեղեդիներ, ինչպէս նաեւ Ս. Պատարագի մասեր՝ երգչախումբերու կատարմամբ:

Գ. Տօն Յովհաննու Կարապետի

Շաբաթ, Յունուար 29, երեկոյեան ժամը 6-15ին տեղի ունեցաւ հերթական հաւաքութիւն մը, նիւթ ունենալով սուրբին կեանքն ու գործին իմաստը:

Բացման խօսքը կատարեց Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան, որմէ վերջ Գ. եւ Ե. դասարաններու ուսանողներ երգեցին «Արեւիկան արդարութեան» շարականը: Շահեն Ասատուրեան արտասանեց Եղիշ Արեւիկա. Դուրեանի «Ուշք» քերթուածը, իսկ Հրանդ Սրկ. Շէրպէթեան մեներգեց «Երկնաւոր» մեղեդին: Տրց. Գրիգոր Կիւլէսէրեանի կատարած Եղիվարդի «Հրաւեր»ի ընթերցումէն եւ Նախապատրաստական դասարանի կողմէ կատարուած «Մարգարէից զերազոյն» շարականի երգեցողութենէն ետք,

բովանդակակից բանաստեղծութիւն մը ըրաւ Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արք. Անէմեան: Փակման խօսքը ըրաւ Պրն. Փայլակ Անթապեան, եւ կրօնական շունչով յաղեցած այս հաւաքոյթը վերջ դտաւ «Հայր մեր»ի համախումբ երգեցողութեամբ:

Դ. Վիճարանական հաւաքոյթ

Առաջին անգամ ըլլալով, Դպրեմանքին մէջ տեղի ունեցաւ վիճարանական հաւաքոյթ մը, Շաբաթ, 12 Փետրուար, երեկոյեան ժամը 6ին: Նիւթն էր՝ «Վարդան Մամիկոնեան» իրաւունք ունէր թէ Վասակ Սիւնի:

Վարդան Մամիկոնեանը պաշտպանողներն էին Սերոբ Սրկ. Գալէմտէրեան եւ Հրանդ Սրկ. Շէրպէթեան. իսկ հակառակորդ կողմն էր Տրց. Սիմոն Պալեան եւ Տրց. Յարութիւն Անուշեան: Վիճարանութիւնը կը վարէր Պրն. Արայ Գալայճեան որ բացման քանի մը խօսքերով ճշդեց վիճարանական կանոնները:

Երկու կողմերն ալ խոր ուսումնասիրութիւններով պատրաստուած, շատ յաջող կերպով ներկայացուցին իրենց թէզերը աւելի քան մէկուկէս ժամուան ընթացքին:

Վիճարանութեան աւարտին, դատական կազմի անդամները՝ Պարոններ Փ. Անթապեան, Յ. Սամուէլեան եւ Գ. Հինդլիան առանձնացան մօտակայ սենեակ մը, խորհրդածելու: Մինչ այդ, ուսանողներ կարծիքներու փոխանակութիւն ունեցան ուսուցիչներու հետ նոյն նիւթին շուրջ: Դատական կազմի խօսնակ Պրն. Հինդլիան յայտնեց իրենց մտիւք՝ թէ որքան ալ երեւութապէս տրամաբանական տուեալներ ըլլային ի նպատակ Վասակ Սիւնիի, ան էր եւ կրմնար դաւաճան մը իր եկեղեցիին, հայրենիքին եւ ժողովուրդին:

Ե. Վարդանանց Տօնակատարութիւն

Շաբաթ, 19 Փետրուար, երեկոյեան ժամը 6ին տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, ի յիշատակ Վարդանանց հերոսամարտին: Բացման խօսքը կատարեց Պրն. Փայլակ Անթապեան, իսկ Վարդանանց խորհուրդին շուրջ խօսեցաւ Պրն. Արայ Գալայճեան: Ան իր խօսքի վերջաւորութեան կոչ ըրաւ ուսանողներուն՝ հաւատարիմ մնալ «ցեղին ձայն»ին եւ միշտ գութըզուրալ բազմադարեան մեր Եկեղեցիին:

Զ. Գիտական երեկոյ

Շաբաթ, 26 Փետրուար, երեկոյեան ժամը 6ին տեղի ունեցաւ գիտական հաւաքոյթ մը, նիւթ ունենալով «Ճարտարարուեստական արդիւնաբերութեան հետեւանքները մեր չրջապատին վրայ»:

Բանախօսն էր Դպրեմանքի թուագիտութեան ուսուցիչ Պրն. Եղիա Մարգարեան, որ հանդամանօրէն ներկայացուց այս շատ կարեւոր նիւթը: Ան բացատրեց թէ ինչպէ՛ս ճարտարարուեստական երկիրներ կ'ապականեն մեր շնչած օդը, թէ ինչպէ՛ս անհաշիւ կը վատնեն բնութեան բարիքները, եւ ինչպէ՛ս կը խաթարեն դետերու, ծովերու եւ ովկիանոսներու ջուրը:

Ուսանողները մեծապէս հետաքրքրուած այս նիւթով, փափաք յայտնեցին ուրիշ առիթով եւս աւելի ծանօթութիւններ ունենալ յիշեալ խնդրին մասին: